

ԿՈՆԿԼԱՒ

(Ժողով չնարութեան Պատին):

ՀՅՈՎԱՅԱՅ Պապերն առաջ ժողովրդէն կը ընտրուէին ըստ նախնի սովորութեան Եկեղեցւոյ . բայց 1270 թւականին սոյն սովորութիւնն իսանգարեցաւ եւ Պապերն սկսան ընտրուիլ կոնկլաւէն , այսինքն Կարդինալաց ժողովէն : Կէման Դն մեռած էր Վիտերբի մէջ 1268 թ . Կարդինալներն ըլ կարենալով համաձայնիլ նոր յաջորդի ընտրութեան համար՝ կամեցան Վիտիբըն թողուլ և հեռանալ . Բայց բընակիներն իմանալով Կարդինալաց նրապատակն՝ քաղաքի գուներն փակեցին և յայտնեցին նոյցա , որ մինչեւ նոր Պապ չընտրեն , պիտի չելնեն : Այս ժամանակէն ՚ի վեր սկսան Կարդինալներն փակուիլ Կոնկլաւի մէջ , որպէս զի խորհին , քննեն և կատարեն Պապի ընտրութիւնն : Այս արարողութիւնն կը կատարուի այսպէս : — Տասն օր Պապի մահէն զինի Կարդինալներն պարտաւոր են Կոնկլաւի մէջ մտնել : Նորա կը մտնեն այն տեղ թափորով եւ իւրաքանչիւր ոք կը նորունի իրեն վիճակուած խուցն : Դեսպաններն կարողեն Կոնկլաւի մէջ մտալ գումարման առաջին քսան եւ չորս ժամն միայն : Ապս այնուհետեւ պարտին նոքա հեռանալ ՚ի սպառ : Դուներն կը փակուին , Կոնկլաւի մեծ դուռն պատով կը հիւսուի եւ ամեն փոքր դուներու առջեւ պահնորդներ կը դրուին : Գահերէց Կարդինալն եւ քահանայապետական սենեկաց հասից Տէսուչ Կարդինալն կամ Դիւանագովիրն առաքելական Դարրապետի հետ կը վաւերացնեն , որ ամենայն ինչ ըստ կարգի փակուած և կնքուած է : Իւրա-

քանիշիւր Կարդինալ իւր հետ կարողէ ունենալ միայն երկու կոնկլաւիստ (Կարդինալի հետ ժողովն մտնող կղերիկոս) մին զինուուրական և միւսն եկեղեցական : Երբեմն իշխան Կարդինալներուն կամ ծերունիներուն և ակարգաբար կը այսուուշիւր կամ ծառայութեան համար նշանակուած միւս պաշտօնեայքն են՝ աւանդապահներ կամ լուսարարն , փոխլուսարարն , մի ատենադպիր , մի փոխատենադպիր , մի խոստովանահայր , երկու բժիշկ , մի վերաբոյժ , երկու սափրիչ , մի դեղագործ , երկու աշակերտներուլ , հինգ հանդիսապետ , մի որմնադիր , մի հիւսն եւ տասն և վեց սպասաւորներ : Մի հանդիսապետ , օրն երկու անգամ , զանգակ ՚ի ձեռին կը ջրի Կոնկլաւին մէջ զեկուցանելու համար , որ Կարդինալներն ժողովին քուէտիւր Կարդինալուն մատուռն : Խւրաքանչիւր Կարդինալու մատուռն մտնելով կը հագնի մի նախորդ եւ մի երկարատուան ծիրանի վերաբիու (փիլոն) մի ճարմանդով միայն կոճկուած :

Կոնկլաւն հաստատուած է Վատիկանի պալատին մէջ և բաղկացած է եղեւնափայտէ շմուռած խուցերէ : Խւրաքանչիւր խուց մի առանձին մասն ունի կոնկլաւիստներու համար : Ամեն օր կէս օրին և երեկոյին խւրաքանչիւր Կարդինալի խոհակերապետն կը գոյ Կոնկլաւի խոհաբարապետէն կամ տաճարապետէն կերակուր կը խնդրէ իւր տիրոջ համար , և կամ կ'երթայ , եթէ յատուկ խոհանոց ունի , այն տեղէն կ'առնու և կը բերէ ՚ի Կոնկլաւն , որց պատուաքաց եւ պատուափակ դուներն կը բացուին միմիայն կերակուր ընդունելու համար : Այս մասին ճշդիւ կը պահպանուին սովորութեամբ նուիրագործուած ամեն ձեւեր : Առջեւէն

կ'երթան Կարդինալի ասպետներն , յորոց իւրաքանչիւրն կը կրէ փայտեայ մանիշակագոյն եւ շբեզածայր գաւաղան՝ Կարդինալի զինուց հետի միասին : Սոյց ետեւէն կընթանայ Կարդինալի սենեկապետն , կրելով ի ձեռին արծաթեայ գաւաղան : Ապա բաց գլխով երկու երկու կ'ընթանան աւագանին կամ աղնուականներն : Սոյց ետեւէն կ'երեւի տաճարապետըն կրելով ուսի վերայ սեղանց զինջակին , որոյ հետ ուղեկից են մատուակն և մասյօշն (միս կարտովն) :

Սոյց կը հետեւին սպասաւորներ , որոնք Կարդինալի կերակուրն կը տանին , սեղանի ամեն անօթներով և ըսպասներով հանդերձ : Այլուսպասաւորներ կը կրեն կողմիներ , որոց մէջ կան դինոյ շլշեր , հայ և մրգեկլէնք : Երբ Կոնկլաւի պատուաւաբաց գրանց կը մօտենան , բարձր ձայնով իրենց Կարդինալի անունն կը տան , որպէս զի նորա սենեկի սպասաւորն , որ Կոնկլաւի մէջ կը սպասէ , վաղէ և այս ուտեստաներն իւր Կարդինալի խուցն կրել տայ : Կոնկլաւէն արտաքըց Եկեղեցական Առաջնորդն կը հակէ . Հառվմայի ժողովութեան երկու պահպանողականներու միցն հետ , եւ մանրախուզիւ աչքէ կ'անցնէ բալը ուտեստաներն , որպէս զի մի գուցէ նամակ կամ տոմսակ զըտնուին անօթոց մէջ :

Նոքա իրաւունք ունին եւ կարող են միաերն եւս բանալ , զգուշանալով որ և իցէ խարեյութենէ կամ նենգութենէ : Եկեղերն ու սրուակներն պէտք է որ ապակիէ կամ բիւրեղէ լինին , որպէս զի իրենց մէջն եղածներն երեւին : Թէ և այս ամեն հակողութիւններն ու զնութիւններն կը լինին , բայց գարձեալ Կարդինալներն հնաբք կը գլաւնեն յարաբերութիւն ունենալ արտաքիններու հետ : Երբ ուտեսաներն ներս

կ'ընդունուին , Պասի մի պատգամաւտարն (curseur) որ ներկայ կը գտնուի այն արարալութեան , մանիշակագոյն զգեստ հագուծ եւ զինանշան գաւաղանն բռնած՝ պատուաբաց գուռն կը փակէ : Եկեղեցական Առաջնորդն կը զինէ , որպէս զի գուռն լու փակուած լինի , և փականքն կը կրէ իւր յատուկ նշանակիր կ'իգովլ :

Ընտրութիւնն կը կատարուիքուէ արկութեամբ : Իւրաքանչիւր Կարդինուլիւր քուէթուղթն կը ձգէ մի սկիհի մէջ , որ գրուած է քուէարկութեան մատրան սեղանի վերայ : Իւրաքանչիւր քուէթուղթ ութ մասի բամնուած է : Առաջին մասն կը պարունակէ ընարազ Կարդինալի անունն երկրորդն պարապէ . Երրորդն կը պարունակէ կնիքն . չորրորդն այն Կարդինալի անունն , որուն քուէ կը տըրուի . հինգերորդն նորա ախողուն ու յատիւթիւններն վեցերորդն է միերեկրորդ կ'իգոյ համար , եօթներորդն պարապէ , և ութերորդն կը պարունակէ Ա. Գրբէն տոնուած մի վճռական խօսք Բուէարկութենէն առաջ մի քսակի մէջ փարբիկ գնդակներ կը ձգուին , որոց վերայ գրոշմուած են ամեն Կարդինալաց անուններն , որպէս զի վիճակաւ ընտրուին երեք քննիչներ քուէարկութեան , երեք հիւանդասեաներ և երեք վերաբննիչներ : Երբ քուէարկութիւնն կըսկիսի , իւրաքանչիւր Կարդինուլ իւր գրած , ծալած և կ'նքած քըւէթուղթն բթամատի և ցուցամատի մէջ բռնելով կը բարձրացնէ , որպէս զի բոլոր ընտրուղներն տեսնեն . կը տանի զայնիսեղանն , ծունկ կը չոքի , կ'ալզօթէ , բարձր ձայնիւ կ'երդնու , կ'ենէ ՚ի սեղանն , կը վերցնէ մաղղման , քուէթուղթն սկիհին կը ձգէ և կը գառնաց իւր տեղի : Հիւանդասես Կարդինալներն կ'երթան կը ժօղովնէն հիւանդ

Կարդինալաց քուէթղթերն մի արկղի
մէջ, որ կը բացուի ՚ի ներկայութեան
ժողովցն : Արագէս զի ընտրութիւնն կա-
տարուած համարուի, պէտք է որ ընտ-
րելացուն ձայնից գննէ երկու երրորդ
կամ երեք մասէն երկուան շահի : Եթէ
մէծամասնութիւն չը գոյանայ, կը դի-
մեն երկրորդ քուէարկութեան (ac-
cessus) : Այսպէս կ'անուանի այն քո-
ւէարկութիւնն , որուն մէջ Կարդի-
նալներն իրենց քուէն կամ ձայնն մի
այլ Կարդինալի կը տան և կը հաջակեն
այս խօսքով աccedo domino . իսկ այն
կարդինալներն , որք չ'են ուղեր իրենց
առաջին քուէն փախել՝ կը հաջակեն
այն խօսքերով աccedo nemini . Երբ
ընտրութիւնն կը վերջանայ , ներս կը
կոչուին երեք առաքելական դպրա-
պետներն , քուէթղթերն զննելով կ'ար-
ձանագրին ընտրութեան արդիւնքն ,
և բոլոր կարդինալներն կը վաւերացը-
նեն իրենց ստորագրութեամբ այն ար-
ձանագրութիւնն : Պապի ընտրու-
թեան ժամանակ երբեմն տեղի ունե-
ցած են առանց քուէարկութեան
ընտրութիւններ : Երբեմն ընտրողք
դիմուծ են մի Կարդինալ ծանուցեալ
ուղղամտութեան և իրաւունք տուած
են ընտրել այն անձն , զոր արժանի կը
աեսնէ նա Ս . Պետրոսի Ա.մոռոյն : Եր-
բեմն Ս . Փողովն միակամ յայտարա-
րութիւն արած է որ և իցէ կարդինա-
լի ընտրութեան համար : Սակայն այս
տեսակ ընտրութեան օրինակներն սա-
կաւ են : Վերջապէս յարգանքը կա-
տարուած ընտրութիւնն այն է , երբ
ընարողաց երկու երրորդ մասն Պապ
անուամբ կ'ողջունէ այն Կարդինալն ,
որ արժանացած է իրենց քուէին :

ԽՍԹՈՅՆԵԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՊԱՊԵՍՏԻՆԻ

Լ ոնդոնում կազմուել է մի ընկե-
րութիւն «Պաղէստինէի ընկերութիւն»
անունով : Սորո գլխաւոր նպատակն է
խրախուսել և օգնել Եբրայեցոց գաղ-
թել Պաղէստինէ : Ընկերութիւնը իւր
նպատակին հասնելու համար մեծ գոր-
ծունէութիւն է ցցց տալի : Անցեալ
տարուայ Դեկտեմբերի 11/25 Լոնդո-
նում այս ընկերութեան կողմից մի պատ-
գամաւորութիւն ներկայացաւ Տաճ-
կատանի գեսպանին և հարցրեց . ար-
դեօք Տաճկատանի կառավարութիւ-
նից մինչեւ այժմ հրատարակուած հլ-
րամաններն և վճիռները , որոնց նպա-
տակն էր զանազան արտօնութիւնով
գաղթականները գեղի Տաճկատան
խրախուսել և հեշտացնել , մինչեւ այ-
ժը պահպանում են իրանց զօրու-
թիւնը թէ ոչ : Դեսպանը մեծ յարգա-
նօք ընդունեց պատգամաւորներին և
յայտնեց , որ այն բոլոր կազմակերպու-
թիւնները մինչեւ ցայժմ ունին իրանց
զօրութիւնն և մի ըստ միունէ համարեց
բոլոր արտօնութիւնները , որ խոստա-
ցած է Տաճկատանի կառավարու-
թիւնից գաղթականներին , որ կը ցան-
կանան բնակիլ թէ Պաղէստինէում
և թէ Տաճկատանի միւս գաւառնե-
րում : Բայց սորա յետ յայտնեց եւս ,
որ տարաբաղդաբար այս արտօնու-
թիւնները մինչեւ ցայժմ ոչ ոքին չեն
հրապուրել գաղթելու դէսլի Տաճ-
կատան : Allg. Zeit.

Այն տեղեկութիւնն Մէլլ-Հայտ-
անի պատուական լրագրէն առնով
և վերատին Ալճանի միջոցաւ հրատարա-
կելով հանդերձ՝ կը յաւելունք , որ
Պաղէստինի մէջ Հբէլից գաղթական-